

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՒՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԵԴՈՅԱՆ Ա. Ռ.

Ի տարբերություն մյուս խոսքի մասերի՝ դերանունը իր բազմաթիվ ու բազմաբնույթ հատկանիշներով, քերականական բազմապիսի դրսևորումներով ու առանձնահատկություններով ներկայանում է որպես մի բարդ համակարգ: Այսօր էլ նրա ծագման, տեսակների իմաստային նշանակությունների վերաբերյալ կան շատ տարակարծություններ¹: Եվ չնայած դրան, դերանվան հիմնական հատկանիշը հայ լեզվաբանության մեջ վերջին հաշվով համարվեց անուններին փոխարինելը: Ինչ խոսք, գեղարվեստական, ինչպես նաև գրական-հրապարակա-խոսական ստեղծագործություններում կան մեծաթիվ օրինակներ, որտեղ դերանունները, իրոք, փոխարինում են անուններին: Բերենք օրինակներ. «**Թագավորը** կարծես շփոթվեց: **Նա** զգաց յուր խոսքերի անպատեհությունը: **Կաթողիկոսը** նայում էր այդ բոլորին և զմայլվում: Եվ **նա** հոգով սլացավ դեպի հին դարերը» (Մ, 235): «Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: **Նա** դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով, որպես մի ամոթխած հարսիկ» (Ը, 435): «Ծիծաղում էին ամենքը, ծիծաղում էր **Զանոն**: **Նա** ուզեց Սուրիկին վեր կացնի, որ նա էլ ծիծաղի, բայց Սուրիկը քնած էր» (ԹՀ, 377):

Սակայն հաճախ անձնական դերանունները փոխարինման դեր չեն կատարում: Օրինակ՝ «**Ես** էգուց բաց կանեմ արքայական գանձարանը և կպատրաստեմ ամենաթանկագին ընծաներ՝ նորընտիր կայսրին տանելու համար: Իսկ քո դեսպանախումբը **դու** ինքդ կկազմես» (Ը, 392): Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները սովորաբար չեն գործածվում խոսողի և խոսակցի անվան փոխարեն: Առաջին նախադասության մեջ խոսողը առաջին դեմքի անձնական դերանունը գործածում է առանց նախապես նշելու իր անունը: Ուրեմն՝ անվան կրկնությունից խուսափելու համար չէ, որ այստեղ գործածված է առաջին դեմքի անձնական դերանունը, հետևապես նա չի դրված անվան փոխարեն: Նույնը դիտարկվում է նաև երկրորդ նախադասության մեջ, որտեղ երկրորդ դեմքի անձնական դերանունը նույնպես փոխարինման գործառույթ չունի:

Խոսողը խոսակցին կարող է դիմել և՛ անունով, և՛ դերանունով (երկրորդ դեմքի), ըստ որում, դերանունով նա կարող է դիմել առանց նախապես

¹ Տես Աճառյան Հր., լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հ 2, Ե., 1954, էջ 1: Այտրնեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Ե., 1987, էջ 38: Սկրոդեր Յո., Գանձ Արամեան լեզուի Ամստերդամ, 1711, էջ 34: Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ 5, Ե. 1950, թջ 129: Աբեղյան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, , էջ 56: Пешковский А. М., Русский синтаксис в научном освещении, М., 1938, с. 163.

նրա անունը տվյալ խոսքի մեջ տալու: Օրինակ՝ «Բենոն հայտնվեց այնպիսի ժամանակ, երբ Կարոն ամեննին մոռացել էր նրա գոյությունը:

- Ուրեմն դո՞ւ էիր քարեր գցում,- հարցրեց Կարոն» (ՔՀ, 65):

Իմաստային տեսակետից որոշ հարաբերակցություն կա դերանվան և գոյականի, ածականի, թվականի, մակբայի միջև: Սակայն իր հիմնական հատկանիշներով դերանունը հակադրվում է հարաբերակից խոսքի մասերին: Գոյականը անվանում է առարկա, ածականը՝ առարկայի որակական և հարաբերական հատկանիշ, թվականը՝ առարկաների թվային հատկանիշ, մակբայը՝ գործողության հատկանիշ: Օրինակ, **ծառ**, **լեռ** բառերը բնության մեջ գտնվող տարբերակված առարկաների անուններ են, **բարի**, **խելացի** բառերը արտահայտում են առարկաների որակական հատկանիշ, **հիսուն**, **հազար** բառերը անվանում են առարկաների թվային հատկանիշ, **դառնորեն**, **դանդաղ** բառերը գործողության հատկանիշ: Սակայն **այս**, **այդ**, **այսչափ**, **այդչափ**, **այնչափ** բառերը գուրկ են կոնկրետությունից, չունեն տարբերակված իմաստ: **Այս** բառը կարող ենք դնել հազարավոր առարկաների վրա՝ **այս** լեռը, **այս** ծովը, **այս** շենքը, **այս** մարդը, **այս** միտքը, կամ՝ **այնքան** մարդ, **այնքան** լեռ, **այնքան** դպրոց, **այնքան** ժողովուրդ, **այնքան** կարծիք, **այսչափ** գորք և այլն: Ընդգծված բառերը չեն անվանում առարկա կամ հատկանիշ, այլ միայն ցույց են տալիս, մատնանշում են:

Դերանունների ճիշտ ուսուցման համար չափազանց կարևոր նշանակություն ունի այն, թե դրանք ինչ հարաբերությամբ են ցույց տալիս առարկան կամ հատկանիշը: Ս. Աբրահամյանը այս հարցին տվել է ճիշտ լուծում: Նա ընդունում է, որ եթե դերանունները չեն անվանում առարկա կամ հատկանիշ, այլ միայն ցույց են տալիս, ապա դա պետք է կատարվի որևէ հարաբերությամբ, որևէ ձևով: Եվ քանի որ դերանունների այդ երկու հատկանիշները հանդես են գալիս միասնաբար և ընդհանուր են բոլոր դերանունների համար, հետևաբար գիտնականը դերանունները բնութագրել է դրանց երկու հիմնական հատկանիշներով՝ ընդհանուր, չտարբերակված իմաստով և որևէ հարաբերություն ցույց տալով: **Դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունեն ընդհանուր, չտարբերակված իմաստ և ոչ թե անվանում են առարկան և հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս կամ ակնարկում են որևէ հարաբերությամբ**²: Այս բնութագրությունը կոնկրետ է, ճիշտ և պարզ:

Դերանունների ձևաբանական հատկանիշները միօրինակ չեն և հարաբերակից խոսքի մասերի նկատմամբ ունեն շատ հակադրություններ: Դերանունների զգալի մասը հոլովվում է անվանական հոլովմամբ, ինչպես՝ բոլորը-**բոլորի**, ամեն մեկը-**ամեն մեկի**, մեկը-**մեկի**, այսինչ-**այսինչի**, ինչ-**ինչի**, որ-**որի** և այլն: Մեծ թվով դերանուններ չեն հոլովվում, ինչպես՝ ինքս, ինքդ, համայն, ամեն ոք, մի, որոշ, ոմն, որպես, ինչպես, ինչպիսի, երբևէ և այլն: Որոշ դերանուններ հոլովվում են դերանվանական հոլովմամբ՝ ես, դու, նա, ինքը, սա, դա, մենք, դուք, ով: Փոխադարձ դերանունները՝ միմյանց, իրար, մեկմեկու, չունեն ուղղական և ներգոյական հոլովածներ:

² *Աբրահամյան Ս.*, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, էջ 62:

Դերանունների մի մասը ունի և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ, ինչպես՝ ես, դու, նա, սա, դա, ինքը, մյուս, ուրիշ, այսինչ։ Միայն եզակի թիվ ունեն այս, այդ, այն, մեկը դերանունները, իսկ միայն հոգնակի թիվ՝ միմյանց, իրար, մեկմեկի(ու) դերանունները։

Դերանվան հարաբերակից ածականները և թվականները կարող են գործածվել գոյականաբար ու հոլովվել, իսկ դերանունների մի մասը այդ հատկանիշը չունի։

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում տարբերակված է դերանունների ութ տեսակ՝ անձնական, ցուցական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, հարցական, հարաբերական, ժխտական։ Ս. Աբրահամյանը վերոհիշյալ աշխատության մեջ ժխտական դերանունը հանել է դերանունների հարացույցից և նրա դերը դրել որոշյալ դերանունների վրա՝ համարելով դրանց մի տարբերակ³։ Հեղինակը վերանայել է նաև հարցական և հարաբերական դերանունները։ Ձևաբանական հատկանիշներից ելնելով՝ նա այդ երկու դերանունները միացրել է՝ համարելով հարցական-հարաբերական դերանուններ⁴։

Անձնական (դիմային) դերանունները ավանդաբար կոչվել են անձնական և քննության են առնվել միայն այդ հատկանիշներով։ Սակայն դրանց մյուս կարևորագույն հատկանիշը՝ դեմք ցույց տալը, անտեսվել է, քննարկման առարկա չի դարձել։ Ինչպես գիտենք, անձ են ցույց տալիս նաև բոլոր դերանունները, իսկ դեմք՝ միայն անձնականները։ Ս.Աբրահամյանը, «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ քննության ենթարկելով այդ դերանունները, ընդգծում է. «Այս դերանունների համար անձ ցույց տալը սահմանափակիչ արժեք ունեցող հատկանիշ չէ։ Նրանց համար առավել բնորոշ հատկանիշը դիմային հարաբերության իմաստն է»⁵։ Եվ նույն կերպ էլ սահմանում է կանոնը. «Անձնական դերանունները անձ (երբեմն էլ առարկա) են ցույց տալիս դիմային հարաբերությամբ»։ Պարզ երևում է, որ հեղինակը կարևորում, ընդգծում է այդ դերանունների դիմայնությունը։ Ճիշտ տեսակետ արտահայտելով՝ հեղինակը եզրակացնում է. «Բայց քանի որ գիտության մեջ տերմինների փոփոխությունը չի խրախուսվում, ուստի ավանդական տերմինը պահպանելով հանդերձ, այն պետք է համարել պայմանական»։ Բայց, միաժամանակ, կարծում ենք, որ ճշմարտությունը չպիտի չափավորվի որևէ նկատառումով։ Մենք հիշյալ դերանունները համարում անձնական (դիմային)՝ նկատի ունենալով, որ դրանք անձը ցույց են տալիս ըստ անձերի դիմային հարաբերության, այսինքն՝ խոսակցության ընթացքում տվյալ անձը խոսողն է, խոսակիցը, թե՛ նա, որի մասին խոսվում է։ Դեմքը ցույց տալը անմիջականորեն կապված է բայ-ստորոգյալի հետ։

³ Նույն տեղում, էջ 146:

⁴ Նույն տեղում, էջ 155:

⁵ Նույն տեղում, էջ 100:

Անձնական (դիմային) դերանունները խիստ անմիօրինակ են իրենց ձևաբանական հատկանիշներով: Այս դերանունները և՛ եզակի, և՛ հոգնակի թվերում յուրաքանչյուր դեմքի համար ունեն գույգ ձևեր.

I դեմք՝ ես-ինքս, մենք-ինքներս

II դեմք՝ դու-ինքդ, դուք-ինքներդ

III դեմք՝ նա-ինքը, նրանք-իրենք-ինքները

Դրանց անմիօրինակությունը նախ դրսևորվում է հոլովման հարացույցում: I դեմքի *ես*, *մենք*, II դեմքի *դու*, *դուք*, III դեմքի *նա*, *ինքը* դերանունները հոլովվում են դերանվանական հոլովմամբ, այսինքն՝ փոփոխությունը տեղի է ունենում բառի հիմքում, վերջավորությունը կամ հոլովիչները դեր չեն խաղում այստեղ: Ահա դրանց հոլովման ընդհանուր պատկերը.

	I դեմք		II դեմք		III դեմք	
<i>Ուղղական</i>	ես	մենք	դու	դուք	նա	նրանք
<i>Սեռական</i>	իմ	մեր	քո	ձեր	նրա	նրանց
<i>Տրական</i>	ինձ	մեզ	քեզ	ձեզ	նրան (ն)	նրանց
<i>Հայցական</i>	ինձ	մեզ	քեզ	ձեզ	նրան	նրանց
<i>Բացառական</i>	ինձանից	մեզանից	քեզանից	ձեզանից	նրանից	նրանցից
<i>Գործիական</i>	ինձանով	մեզանով	քեզանով	ձեզանով	նրանով	նրանցով
<i>Ներգոյական</i>	ինձանում	մեզանում	քեզանում	ձեզանում	նրանում	նրանցում

Հոլովման այդ հարացույցից պարզ երևում են դերանվանական հոլովման առանձնահատկությունները: I դեմքի եզակի *իմ* սեռականը չի կազմվել ուղղականից: Նոր ձև է նաև *ինձ* տրականը, որը չի կազմվել ոչ՝ ուղղականից, ոչ՝ սեռականից: Նույն կերպ I դեմքի հոգնակի սեռականը՝ *մեր*, չի կազմվել *մենք* ուղղականից: Նոր ձև է նաև տրականը՝ *մեզ*: Նույն սկզբունքով են հոլովվել II դեմքի *դու* ուղղականը և *դուք* հոգնակին: Այստեղ էլ սեռականները չեն կազմվել ուղղականի ձևերից, իսկ տրականները՝ սեռականներից: Ինչպես տեսնում ենք, այդ երկու դեմքերի եզակի և հոգնակի բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրական հոլովաձևից՝ անվանական հոլովումների *ից*, *ով*, *ում* վերջավորություններով: Այս դերանունների թվի կարգը նույնպես միօրինակ չէ: I դեմքի *մենք* հոգնակին չի կազմվել *ես* եզակիից, այն բոլորովին այլ արմատ է: Իսկ II դեմքի *դուք* հոգնակին կազմվել է *դու* եզակիից՝ ք-ի հավելումով:

Ինքս-ինքներս, *ինքդ-ինքներդ* եզակի ու հոգնակի առանձնահատկությունն այն է, որ սրանք չեն հոլովվում, բայց ունեն լեզվառձական կարևոր նշանակություն: Երրորդ դեմքի անձնական (դիմային) դերանունները նախորդներից մի փոքր այլ պատկեր են ներկայացնում: Նկատելի է, որ այս դեպքում հոլովվում են բոլոր դերանունները. *նա*, *ինքը* եզակիները՝ դերանվանական հոլովմամբ, հոգնակիները՝ անվանական հոլովմամբ:

		III դեր		
Ուղղական	նա	ինքը	նրանք	իրենք
Սեռական	նրա	իր	նրանց	իրենց
Տրական	նրան (ն)	իրեն	նրանց	իրենց
Հայցական	նրան	իրեն	նրանց	իրենց
Բացառական	նրանից	իրենից	նրանցից	իրենցից
Գործիական	նրանով	իրենով	նրանցով	իրենցով
Ներգոյական	նրանում	իրենում	նրանցում	իրենցում

Իսկ որո՞նք են անձնական (դիմային) դերանունների շարահյուսական կիրառությունները, ինչպես նաև դրանց լեզվառական և հուզաարտահայտչական նշանակությունները: Այդ դերանունները իրենց կենսունակության շնորհիվ ավելի շատ են գործածվում, քան դերանվան մյուս բոլոր տեսակները:

Ես - ինքս, դու - ինքդ, մենք - ինքներս, դուք - ինքներդ, նրանք - իրենք գույզ ձևերի համատեղ կիրառությամբ ընդգծվում, կարևորվում են դերանուն ենթակաները, այսինքն՝ գործողություն կատարողները: Բերենք օրինակներ՝ *Դու ինքդ* հեռացար հայրենիքից: *Ես ինքս* այդպես կամեցա: *Դուք ինքներդ* փակեցիք ձեր ճանապարհը:

Թե՛ գեղարվեստական և թե՛ ժողովրդական խոսքում հաճախ է պատահում, որ դերանվան ուղղական հոլովաձևերը հանդես են գալիս իրենց տրական հոլովաձևերի հետ և կազմում են բաղադրյալ ենթակա, ինչպես՝ *Ես ինձ ու ինձ* միտք եմ անում: *Դու քեզ ու քեզ* հեռանում ես տնից: *Դուք ձեզ ու ձեզ* իշխանություն եք ստեղծում:

Դերանուն-ենթակաները հաճախ գեղչվում են, երբ նախադասության մտքից հասկացվում է ենթական, և պետք չէ նախադասությունը ծանրաբեռնել: Չարենցը «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության առաջին տողում գործածել է ես դերանուն ենթական, իսկ հաջորդ ութ տողերում գեղչել է: Իսահակյանը «Է՛յ, ջան-Հայերենիք, ինչքա՛ն սիրուն ես» բանաստեղծության մեջ գեղչել է 2-րդ, 3-րդ և 4-րդ տների բոլոր դերանուն ենթակաները: Նույն կերպ, Տերյանը «Սիրտդ որպես վառ ատրուշան պահիր վառ» 10 տողից բաղկացած բանաստեղծության մեջ գեղչել է բոլոր դերանուն ենթակաները: Հաճախ այդպիսի ենթակաները ոչ միայն չեն գեղչվում, այլև կրում են տրամաբանական շեշտ, որն արտահայտում է հեղինակի վերաբերմունքը գործողության նկատմամբ, ավելի է ընդգծում, կարևորում գործողությունը կատարողին: Օրինակ.

Ես եմ հիմա մի պոետ և իմ անունը Չարենց...

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական

Դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան... (ՉԵ, 31):

Չարենցը տրամաբանական շեշտ կրող դերանուն-ենթականների կրկնությամբ խոր հուզաարտահայտչականություն է ստեղծել նաև Վահան Տերյանի հիշատակին նվիրված բանաստեղծության մեջ.

Դու արդեն հեռացել ես աշխարհից, էլ չկաս դու.

Դու - լուսե, անցար ու չկաս:

Դու - թեթև, անմարմին, անծիր:

Դու ուրիշ շխնդության երազ (ՉԵ, 50):

Տրամաբանական շեշտ կրող դերանուն-ենթակաների դասական օրինակներ են տվել Ավետիք Իսահակյանը և Վահան Տերյանը: Իսահակյանը «Լիլիթ» պատմվածքում այդ ենթակաների կրկնությամբ ավելի է խորացնում սիրատոչոր Ադամի տառապանքները. «- Լիլի՛թ, Լիլի՛թ, *դու* իմ ճակատագիր, հրաշքների ու հմայքների միակ դրախտն ես *դու*, Երազն ես *դու*, հրաշքն ու դյուրանքը, Լիլի՛թ... Դու չճաշակված գաղտնիք ես, Լիլի՛թ, արևադրյունն ես, *դու*, Լիլի՛թ, անհաղթելի կինն ես *դու*, Լիլի՛թ» (ԻԱԼ, 27):

Տերյանի «Հրաժեշտի գազել» բանաստեղծության մեջ կրկնվող ես ենթական կրում է տրամաբանական շեշտ: Ահա, օրինակ.

Մնաք բարով, ասում եմ *ես* բոլոր մարդկանց՝ չար ու բարի...

Մնաք բարով, ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու,

Ոտխներիս՝ չար ու արթուն, ասում եմ *ես*, մնաք բարով (ՏՎ, 75):

Կամ՝ Այնպես նագիկ, այնպես թեթև, այնպես օրոր քայլում ես *դու*,
Ոսկելուսիկ, օ, հրաթև, այսպես բոսոր փայլում ես *դու*,

Դու վիթ ահոտ, դու խուսափուկ, այնպես անուշ նայում ես *դու*,

Եվ այնպես տոթ, այնպես փափուկ, այնպես քնքուշ փայլում ես *դու* (ՇՀ, 51):

Նշենք, որ դերանուն ենթակաները չեն զեղչվում նաև այն դեպքերում, երբ քերականական դեմքերի միջև ստեղծվում է հակադրություն, ինչպես՝

Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես,

Հենց *ես ես*՝ մենակ լալիս ու տանջվում,

Դու սարի լանջին խաղեր ես կանչում.

Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել... (ԹՀ, 87):

Անձնական դերանունները նախադասության մեջ դառնում են նաև ստորոգելիական վերադիրներ, ուղիղ և անուղղակի խնդիրներ, բազմաբնույթ պարագաներ, գոյականական անդամի լրացումներ: Խոսենք դրանց մասին առանձին-առանձին:

Ստորոգելիական վերադիր՝ «Հա՛, մանչուկ, այդ *դու՛ն ես*: Ինձ խայթող օձը *նա է՛*» (ՇՎ, 27):

«Ձեզ բարի ցանկացողները *մենք էինք*: Այդ ոչինչը *ես եմ*» (ԻԱԵԺ, 78):

Ուղիղ խնդիր՝ «Վաղո՛ւց, վաղուց ես դու *ինձ* մոռացել... » (ԹՀ, 87)

«Ադամը մոռացել էր *ինքն իրեն*» (ԻԱԵԺ, 31):

«Ադա՛մ, սիրելիս, եկ համբուրեմ *քեզ*» (ԻԱԼ, 23):

Անուղղակի խնդիր՝ «Ողջույն ձեզ, կյանքիս անդրանիկ հուշեր» (ՀԹ, 83):

«Որբացած հոգիս ողջունում է *ձեզ* » (ն.տ., 101):

«Հեծեճանքներս չափաբերելու արվեստը տրված չէ *ինձ* (ՇՎ, 36):

Պարագաներ՝ «Տեր իմ, թագուհին կամենում է խոսել ձեզ հետ» (ն.տ.):

«*Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք*» (ԹՀ, 3):

«Գնում է *նրա հետ*, քաջ ախպերս հետևից» (ն.տ.):

Հատկացուցիչ՝ «Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր» (ՉԵ, 113):

«Չի հասկանա *ձեր* հոգին» (ն.տ., 204):

«*Իմ* աչքի առաջից չի հեռանում էն մանուկ Նետոն» (ԹՀ, 58):

Այժմ՝ անձնական դերանունների քերականական համաձայնության մասին: Քանի որ բայը դեմք ցույց տվող խոսքի մաս է, հետևապես հիշյալ դերանունները և բայ-ստորոգյալները նախադասության մեջ ամենասերտ հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ: I դեմքի եզակի դերանուն-ենթական համաձայնում է I դեմքի բայ-ստորոգյալի հետ, ինչպես՝ «*Ես գիտեմ*» հիմա շատերի նման մի սովորական աղջիկ էիր դու» (ՏՎ, 71):

II դեմքի եզակի դերանուն-ենթական համաձայնում է II դեմքի եզակի բայ-ստորոգյալի հետ. «*Դու* անդարձ *հեռացար*» (ն. տ., 79): Նույն կերպ III դեմքի եզակի դերանուն ենթական համաձայնում է III դեմքի բայ-ստորոգյալի հետ. «*Նա գնաց* հեռու, էլ չի դառնալու, էլ չի դառնալու...» (ն. տ., 84):

Եթե I և II դեմքերի դերանուն ենթակաները գործածվում են միասին, համաձայնությունը տեղի է ունենում առաջին դեմքի հետ, քանի որ այդ դեմքը ամենաուժեղն է, խոսողը ինքն է: Օրինակ՝ «*Ես և զու* միևնույն խնդիրն ունենք»: II և III դեմքերի համատեղ կիրառության դեպքում համաձայնությունը տեղի է ունենում II դեմքի հետ, քանի որ առաջին դեմքից հետո ուժեղը II դեմքն է՝ խոսակիցը: Իսկ III դեմքը ամենաթույլն է:

Դու և *նա* հակադրվում եք ամեն օր: Երեք դեմքերի միասին կիրառության դեպքում էլ համաձայնությունը կատարվում է I դեմքի հետ, ինչպես՝ *Ես, զու* և *նա* աշխատում ենք միևնույն դպրոցում:

Միևնույն սկզբունքով է կատարվում նաև հոգնակիների համաձայնությունը: Օրինակ՝ «*Մենք և զուք* մարտնչել ենք Արցախի ազատության համար»: «*Մենք, զուք և նրանք* պայքարում ենք ազատության և անկախության համար»:

Երբեմն ոճական նկատառումներով I դեմքի փոխարեն կիրառվում են II կամ III դեմքերը: Այն էլ ասենք, որ այդ երևույթը նկատվում է վարպետ գրողների երկերում: Օրինակ. «-Ո՞ր է կաթողիկոսը, հայոց հայրապետը...» (Մ, 142): Մարգարետունին դիմում է կաթողիկոսին: II դեմքի փոխարեն գործածվել է անձնանիշ գոյական: Կամ՝ «-Իշխան... տեսնում ես, որ *նա* քո առջև է» (ն.տ.): Խոսողը ինքը՝ կաթողիկոսն է, որը I դեմքի *ես* դերանվան փոխարեն կիրառել է III դեմքի *նա* Լրաբեր 3-9 դերանունը: Մարգարետունու հաջորդ հարցին

կաթողիկոսը պատաս- խանում է հարցումով. «Ո՞ւր կկամենայիր, որ *նա* լիներ» (ն.տ.): Օրինաչափական էր՝ որ *ես* լինեի: I դեմքի փոխարեն՝ դարձյալ III դեմք:

Դերանուններն ունեն նաև բառակազմական արժեք: Պիտի ասել, որ անձնական (դիմային) դերանունները այս հարցում սահմանափակ դեր ունեն: Այդ դերով հանդես են գալիս միայն *ես* և ինքը դերանունները: *Ես*-ով կազմվել է միայն մի քանի բառ՝ *եսասեր, էսապաշտ, էսամոլ, էսականություն, էսասիրություն*, իսկ *ինքը* դերանունը բավական կենսունակ է և կազմել է հարյուրից ավելի բառ: Հիշատակենք մի քանիսը. *ինքնասեր, ինքնաբավ, ինքնահավան, ինքնակամ, ինքնաեռ, ինքնություն*, և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԹՀ – Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 3, Ե., 1989:
2. ԻԱԼ – Իսահակյան Ավետիք, Լիլիթ, Ե., 1983:
3. ԻԱԵԺ – Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու, Ե., 1987:
4. Մ – Մուրացան, Գևորգ Մարգարետունի, Ե., 1977:
5. ՇՀ – Շիրազ Հովհ., Երկեր, հ. 1, Ե., 1981:
6. ՇՎ – Շեքսպիր Վ., Ընտիր երկեր, Ե., 1952:
7. ՉԵ – Չարենց Ե., Հատընտիր, Ե., 1977:
8. ՏՎ – Տերյան Վահան, Երկերի ժողովածու, Ե., 1956:
9. Բ – Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Ե., 1950:
10. ՔՀ – Քոչար Հ., Մեծ ատն զավակները, Ե., 1950:

ЛИНГВО-СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ЛИЧНЫХ МЕСТОИМЕНИЙ

ЕДОЯН А. Р.

Резюме

Личные местоимения в армянской лингвистике традиционно назывались только личными. На наш взгляд, название недостаточно полное. В системе местоимений это местоимение единственное, которое выражает лицо и число и соотносится с другой частью речи, выражающей лицо- глаголом.

Целесообразнее и правильнее считать это местоимение собственно-личным. Наряду с грамматическими признаками собственно-личных местоимений рассматриваются также синтаксические особенности, их функциональная роль в предложении. Важно также изучение стилистических значений совместного употребления парных форм собственно-личных местоимений.